# Հայաստանի Հանրապետութեան լեզուի պետական տեսչութեան հայերէնի բարձրագոյն խորհրդի որոշումը հայերէնի գրանշանների հաւաքածուի մասին

Հայերէնի բոլոր գրաւոր տարբերակները արտայայտող գրանշանների հաւաքածու սահմանելու նպատակով Հայաստանի Հանրապետութեան լեզուի պետական տեսչութեան հայերէնի բարձրագոյն խորհուրդը որոշում է՝ (*)

1. Հիմք ընդունել մեսրոպեան այբուբենը՝ ըստ աւանդոյթի այն միաժամանակ օգտագործելով թուային արժէքներ արտայայտելու համար։

2. Ժամանակակից գրական լեզուի արեւելահայ եւ արեւմտահայ տարբերակների, ինչպէս նաեւ միջին հայերէնի գրութեան գործող համակարգերի առանձնայատկութիւններն արտայայտելու համար պահպանել յետ-մեսրոպեան շրջանում ընդունուած ու, օ, ֆ, և, տառերը եւ ներկայումս հայերէն տեքստերում կիրարկուող կէտադրական նշանները։

3. Հաստատել հայերէնի գրանշանների հաւաքածուի հետեւեալ աղիւսակը.

| | | | |
|---|---|---|---|
| Ա | Ի | Յ | Տ |
| Բ | Լ | Ն | Ր |
| Գ | Խ | Շ | Ց |
| Դ | Ծ | Ո | Ւ |
| Ե | Կ | Չ | Փ |
| Զ | Հ | Պ | Ք |
| Է | Ձ | Ջ | և |
| Ը | Ղ | Ռ | Օ |
| Թ | Ճ | Ս | Ֆ |
| Ժ | Մ | Վ | ՈՒ |

## ԿԷՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| · | միջակէտ |
| , | ստորակէտ |
| : | վերջակէտ |
| ` | բութ |
| ՛ | շեշտ |
| ՞ | պարոյկ / հարցական նշան |
| ՜ | երկար / բացականչական նշան |
| - | միութեան գծիկ |
| — | անջատման գիծ |
| - | ենթամնայ / տողադարձի նշան |
| ՚ | ապաթարց |
| ... | կախման կէտեր |
| .... | բազմակէտ |
| ( | ձախ կոր փակագիծ |
| ) | աջ կոր փակագիծ |
| [ | ձախ ուղիղ փակագիծ |
| ] | աջ ուղիղ փակագիծ |
| { | ձախ ձեւաւոր փակագիծ |
| } | աջ ձեւաւոր փակագիծ |

*Ծանօթ.*

1. Արեւելահայ բառարանները կազմելիս *ու*-ն զետեղել *ւ*-ի տեղում:

2. *և*-ը գործածելու դէպքում այն տեղադրել ըստ այբուբենի սովորական կարգի, այսինքն՝ *եւ* կապակցութեան փոխարէն:

**ՀՀ ԼԵԶՈՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ
ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Հաստատուած է՝ ՀՀ լեզուի պետական տեսչութեան պետի 1996 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով։